



შფანგებისა და გამომავლის  
ეროვნული ცენტრი

# Թեստ կերպարվեստից և կիրառական արվեստից

## Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Գործնական աշխատանքը կատարեք գործնական աշխատանքի համար հատկացված թերթիկի վրա: Գործնական աշխատանքը (առաջադրանք 26) կատարելու համար Ձեզ բաժանել են մատիտ, ռետին և սրիչ:

Գործնական առաջադրանքի համար հատկացված թերթիկի վրա աշխատեք մատիտով: Մատիտ թույլատրվում է գործածել միայն այս առաջադրանքը կատարելու համար:

**Թեստի առավելագույն միավորն է՝ 60:**


**Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ:**

**Մաղթում ենք հաջողություն :**




**№ 1-19 առաջադրանքների հրահանգ** – (Յուրաքանչյուր ճիշտ պատասխան ` 1 միավոր)- Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ընտրված պատասխանը տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա հետևյալ կերպ. պատասխանների համապատասխան վանդակում դրեք X նշանը: Ոչ մի ուրիշ նշում ` հորիզոնական կամ ուղղաձիգ գծեր, շրջագծում և այլն, համակարգչային ծրագիրը չի ընկալում: Եթե ցանկանում եք պատասխանների թերթիկի վրա պատասխանը ուղղել, ամբողջությամբ ներկեք վանդակը, որտեղ դրել եք X նշանը և հետո նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Հնարավոր չէ երկրորդ անգամ ընտրել այն պատասխանը, որն ուղղել եք:

1. Ճարտարապետական ո՞ր տիպին է պատկանում նկարում ներկայացված տաճարի հատակագիծը:




- ա) Եռակոնք,
- բ) Քառակոնք,
- գ) Բազիլիկ,
- դ) Բազմաբսիդ:

2. Ո՞ր գեղարվեստական առանձնահատկությունը բնորոշ է Ֆրագոնարի «Ճոճանակը» գեղանկարին:



- ա) Կոմպոզիցիայի դեկորատիվ բնույթը,
- ծ) Ձևերի ընդհանրացմամբ ստեղծված մոնումենտալիզմը,
- ց) Թափանցիկ և թեթև գեղանկարչական եղանակը,
- զ) Լիրիզմ՝ ստեղծված թեթև գունեղ լուծումով:

3. Ո՞րն է վրաց քրիստոնեական ճարտարապետության մեջ բազմաբսիդ տիպի ճարտարապետության նմուշը:



- ա) Տբեթին,
- ծ) Քվաթախսին,
- ճ) Ալավերդին,
- Պ) Գավազին:

#### 4. Ո՞ր առանձնահատկությունն է բնորոշ Նոր Շուամթայի գեղանկարչությանը:



ա) Ուրվագծային նկարը վառ և անկյունավոր է, պատկերների համամասնությունները խախտված, պատկերի ձևերը հարթային կոմպոզիցիան համաչափ:

բ) Կոմպոզիցիան ազատ և դինամիկ է, նկարը կատարելագործված, համամասնական և պլաստիկ, ձևերը ռեալիստական և ընդհանրացված, կոմպոզիցիան զուրկ է մանրակրկիտ պատմողականությունից:

գ) Կոմպոզիցիան բազմապատկեր է, նկարը դինամիկ և բեկոտված, պատկերները չափազանցված, ձևերը գեղանկարչորեն մոդելացված, ստեղծվում է տարածության պատրանք, կոմպոզիցիայի պատմողականությունն ընթանում է մանրամասնություններով:

դ) Պատկերը կոպիտ է և պաճուճազարդ, կոլորիտը աղքատիկ, կոմպոզիցիաները չափից ավելի դեկորատիվ, մոնումենտալ գեղանկարչությունն իր բնույթով մոտ է սրբանկարչությանը:

5. Ո՞վ է լուսանկարում ներկայացված քանդակային կոմպոզիցիայի հեղինակը:



- ա) Անտոնիո Կանովան,
- ծ) Լորենցո Բերնինին,
- ճ) Միքելանջելո Բուոնարոտտին,
- դ) Օգյուստ Բոդենը:

6. Ո՞ր գեղարվեստական առանձնահատկությունը բնորոշ է Խաղաղության զոհասեղանի ռելիեֆին:



ա) Ռելիեֆային կոմպոզիցիան ներկայացնում է անատոմիայի գիտելիքների հիման վրա ստեղծված մարդկանց ծավալային պատկերները:

ծ) Ռելիեֆային կոմպոզիցիան հարթագծային է, պատկերների համաչափությունները խախտված են և էքսպրեսիվ:

գ) Կոմպոզիցիայի դինամիզմը ստեղծվում է վարագուրման պատկերման և պատկերների դիրքի յուրահատկություններով:

դ) Պատկերների դեմքերը իրատեսական են, վարպետը ներկայացնում է կերպարների դիմանկարային բնութագրում:



7. Վաղ քրիստոնեական ո՞ր վրաց տաճարն է զարդարում լուսանկարում ներկայացված ռելիեֆային կոմպոզիցիան:



- ա) Մցխեթայի Ջվարին,
- ბ) Բոլնիսի Սիոնին,
- գ) Ծրումին,
- դ) Ատենի Սիոնին:

8. Ուշադրություն դարձրեք ճարտարապետական կառույցի ճակատի դեկորատիվ ձևավորման հատվածներից մեկին՝ քանդակապատկերներին, մասկարոններին և դեկորատիվ տարրերի կոմպոզիցիոն ամբողջությանը: Ո՞ր ոճի առանձնահատկությանն է համապատասխանում նման գեղարվեստական ըմբռնումը:



- ա) Մոդեռնիզմի,
- բ) Մոդեռնի,
- գ) Բարոկկոյի,
- դ) Ռոկոկոյի:

9. Ո՞ր դարաշրջանի և/կամ ուղղության արվեստի նմուշ է ներկայացված լուսանկարում:



- ա) Գոթիկայի,
- ծ) Ռենեսանսի,
- զ) Բարոկկոյի,
- զ) Էքսպրեսիոնիզմի:

10. Ո՞ր դարաշրջանի և/կամ գեղարվեստական ուղղության նմուշ է ներկայացված տվյալ նկարում:



- ա) Գոթիկայի,
- բ) Նեոկլասիցիզմի,
- գ) Բարոկկոյի,
- դ) Ռոմանտիզմի:

11. Ո՞վ է լուսանկարում ներկայացված նկարի հեղինակը:



- ա) Իրակլի Փարջիանին,
- ծ) Դավիթ Կակարաձեն,
- զ) Պետրե Օցխելին,
- զ) Սերգո Քոբուլաձեն:

12. Ո՞ր գեղարվեստական առանձնահատկությունը *բնորոշ չէ* ներկայացված արվեստի նմուշներին:




ա) Դեկորատիվ արվեստի նմուշները նախաքրիստոնեական դարաշրջանի վրաց դարբնագործության ավանդույթի արտահայտումն են:

ბ) Կորած մումի տեխնիկայով ստեղծված մողելների նմուշներն ինքնատիպ են և առանձնանում են ազատ գեղարվեստական բնույթով:

գ) Դեկորատիվ արվեստի նմուշները կատարման ոճով, ձևով և բնույթով բավական տարբերվում են իրարից:

դ) Քառակուսու մեջ ներգծված, հիմնական և փոքր չափի ստիլիզացված պատկերները ստեղծում են ցանցկեն, ռելիեֆային կոմպոզիցիա:

13. Ո՞ր գեղարվեստական ուղղությանն է պատկանում ներկայացված արվեստի նմուշը:



- ա) Ֆուտուրիզմին,
- ծ) Ֆովիզմին,
- գ) Սյուրռեալիզմին,
- դ) Փոփ արտին:


14. Թվարկածներից ո՞ր ճարտարապետն է նախագծել Հռոմի Սուրբ Պետրոսի հրապարակը:



- ա) Բրամանտեն,
- ծ) Սանգալլոն,
- ց) Բրունելլեսկին,
- ղ) Բերնինին:



15. Ո՞ր գեղարվեստական հնարքը քնորոշ չէ Էդվարդ Հոփերի «Չոփ Սուեյ» (չինական ռազու)» գեղանկարին:





- ա) Պատկերների ճշգրիտ հարաբերակցություն շրջապատող աշխարհի հետ,
- ծ) Կոմպոզիցիայի կառուցում կինոկադրի սկզբունքով,
- զ) Առջևի պլանի մանրամասնում,
- զ) Չինական և բաղադրյալ գույների ներդաշնակ համադրություն:

16. Ներկայացված արվեստի նմուշի դետալի համաձայն անվանեք ստեղծագործության հեղինակին:



- ա) Մաթիաս Գրունեվալդ,
- ծ) Հանս Հոլբայն,
- գ) Հիտեր Բրեյգել,
- դ) Յան Վան Էյկ:

17. Ո՞ր բացատրությունն է արտահայտում գծի առանձնահատկությունը ներկայացված արվեստի նմուշի վրա:



- ա) Առաջին նկարում գիծը ծառայում է թեթև կոնտրաստի էֆեկտ ստեղծելուն, այն դեպքում երբ երկրորդ նկարում գիծը կիրառված է տարածության պատրանք ստեղծելու համար:
- ბ) Առաջին նկարում գծով ստեղծվում է ուրվանկար, իսկ երկրորդ նկարի վրա ստեղծվում է նաև ֆակտուրա:
- գ) Առաջին նկարում գիծը ծառայում է համաչափության և հավասարակշռության պահպանմանը, իսկ երկրորդ նկարում ստեղծում է ստվերի էֆեկտ:
- դ) Առաջին նկարում գիծը սահմանագծում է նեգատիվ տարածություն, իսկ երկրորդ նկարում գծի միջոցով տարածության մեջ ստեղծվում է հավաքման կետ:

18. Ո՞ր գեղարվեստաոճային առանձնահատկություններն են բնորոշ նկարում տրված վրաց միջնադարի քանդակադրոշմի (չեկանկա) արվեստի նմուշին:



ս) Ցածր ռելիեֆով կատարված համաչափ կոմպոզիցիայում ֆիգուրային պատկերը ծավալային է, համամասնական և արտահայտչական:

ծ) Բարձր ռելիեֆով կատարված պլաստիկ պատկերների և կատարելագործված զարդանախշային մոտիվների համադրությամբ ստեղծվում է հիանալի նմուշ:

ժ) Գծային, դեկորատիվ բնույթի ցածր ռելիեֆով կատարված պատկերները առանձնանում են չափազանցված ձևերով և էքսպրեսիայով:

Կ) Բարձր ռելիեֆով կատարած գոտկատեղից վերև երկարացված պատկերներին ձևերի չափազանցումն ավելի սեթևեթությունն է հաղորդում, քան արտահայտչականություն:

19. Ներկայացված գեղանկարչական կոմպոզիցիաներից որտե՞ղ է գծին, որպես արտահայտչական միջոցի, տրվում առաջատար նշանակություն:

ա)



ბ)



გ)



დ)



(1) № 20-25 առաջադրանք. «Ճշմարիտ է - Սխալ է»


**Առաջադրանքի հրահանգ**–ուշադիր ծանոթացեք տրված դրույթներին, եթե համարում եք, որ դրույթը ճիշտ է, ապա նշեք համապատասխան վանդակը: Նման դեպքում մեկնաբանություն չի պահանջվում: Եթե համարում եք, որ դրույթը սխալ է, ապա նշեք համապատասխան վանդակը և հատուկ հատկացված տեղում գրեք ճիշտ ձևակերպումը:

**Դիտողություն.** Եթե կարծում եք, որ ձևակերպումը սխալ է և գտնում եք, որ վկայության մեջ տրված պարզաբանումը հնքնին ճիշտ է ձևավորված, թեև չի ներկայացնում տրված տերմինի և/կամ բառի բացատրությունը, ապա անփոփոխ թողեք պարզաբանումը և այդ նույն պարզաբանման համար փնտրեք և համապատասխանեցրեք համարժեք տերմին և/կամ բառ:

Նմուշ.

ճացալեթա Խ    ֆ        օ      
Գոհմեյրոտից՝ ժեբարու, Խըթն թոնոփրոմեյրո օջ-  
իցն թոնսեղևց, յոթմեյրո օջիցնոս.

20. Ներկայացված գեղանկարչական կոմպոզիցիան Բարոկկոյի տիպային նմուշ է:



21. Ներկայացված դիցարանական կերպարը Միջագետքի աստվածություն է մարմնավորում:





22. Ներկայացված նկարի վրա ձևերի չափազանցման միջոցով նկարիչը պատկերին արտահայտչականություն է հաղորդում:



23. Ալեքսանդր Կալդերի մոբիլները կինետիկ արվեստի նմուշներ են:

24. Չիարոսկուրոն իտալերեն տերմին է և ուրվագծային նկար է նշանակում:

25. Որմնախորշը կլիսասյուն նշանակող տերմին է:

(7) № 26 Առաջադրանք. *Գործնական աշխատանք*

**Հրահանգ** – որպես օրինակ ներկայացված է լուսանկար, որի վրա պատկերված է նատյուրմորտ սխտորներով: Ներկայացված նմուշի համաձայն ձեր աշխատանքային թերթիկի վրա կառուցեք սխտորի գրաֆիկական պատկեր: Աշխատանքը ստեղծելիս հաշվի առեք կոմպոզիցիոն բաշխման սկզբունքները, ձևին հաղորդեք ծավալ, պատկերեք առարկայի համապատասխան ֆակտուրան (Հաշվի առեք, որ աշխատանքում պարտադիր չէ պատկերել լուսանկարում առկա սև ֆոնն ու արտացոլանքները): Առաջադրանքը կատարեք գործնական աշխատանքի համար հատկացված թերթիկի վրա:



(1) № 27-29 Առաջադրանք. *Ժամանակագրության որոշում:*


**Առաջադրանքի հրահանգ** – դասավորեք (հնագույնից մինչև նորագույն) գեղարվեստական հոսանքները, նկարիչներին, ճարտարապետական և կերպարվեստի նմուշներն, ըստ դրանց ստեղծման ժամանակի: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում: Նկատի ունեցեք, որ աղյուսակում գրվում է միայն ընտրած միավորի համապատասխան թվանշանը:

27. Դասավորեք ճարտարապետական տարրերն, ըստ դրանց ստեղծման ժամանակի.


1.



2.



3.




4.




28. Դասավորեք ներկայացված ճարտարապետական նմուշներն, ըստ դրանց ստեղծման ժամանակի.


1.



2.



3.



4.






29. Գասպարերը դիմանկարներն, ըստ դրանց ստեղծման ժամանակի.

1.



2.



3.







4.



(3) № 30 Առաջադրանք. Համապատասխանության որոշում

Առաջադրանքի հրահանգ – A սյունակում տրված գեղարվեստական հոսանքներին համապատասխանեցրեք B սյունակում տրված կերպարվեստի նմուշները: Նկատառեք, որ մեկ հոսանքին համապատասխանում է միայն մեկ նմուշ:

A	1. Պոստիմպրեսիոնիզմ	2. Հեղինիզմ	3. Ար-նուվո	
B ա. 	բ. 	գ. 	դ. 	ե. 

(3) № 31 Առաջադրանք. Համապատասխանության որոշում

Առաջադրանքի հրահանգ – A սյունակում տրված արտահայտչական հնարքներն ու միջոցները համապատասխանեցրեք B սյունակում տրված արվեստի նմուշներին, որտեղ այդ հնարքներն ու միջոցները գեղարվեստական կերպարի բնույթ ստեղծելու հիմք են հանդիսանում: Հաշվի առեք, որ մեկ արտահայտչական միջոցին և/կամ հնարքին համապատասխանում է միայն մեկ նմուշ:

<p><b>A</b></p> <p>1. Գույն</p> <p>2. Ֆակտուրա</p> <p>3. Ռակուրս</p>	<p><b>B</b></p> <p>ա. </p> <p>բ. </p> <p>գ. </p> <p>դ. </p> <p>ե. </p>
--	---

## Գրավոր առաջադրանքների հրահանգ

Ուշադիր ծանոթացեք առաջադրանքներին և ըմբռնեք դրանք:

Աշխատանքը կատարեք դյուրըմբռնելի ձեռագրով: Այն հատվածները, որոնք դժվար ընկալելի են, չեն ստուգվի և գնահատելիս չեն նկատառվի:

Գրավոր աշխատանքներին կից ներկայացված են ցուցումներ: Այդ ցուցումներին պետք է պատասխանեք այնպես, որ աշխատանքն իմաստային տեսանկյունից լինի ամբողջական, խոսափեք հարցերին տրված մեխանիկական պատասխաններից:

Ձեր կարծիքը ձևակերպեք պարզ, հստակ և հիմնավորված: Աշխատանքը կգնահատվի, նրանում դրսևորված փաստարկման (սեփական կարծիքն օրինակներով հիմնավորելու) և ինքնուրույն մտածողության ունակության համաձայն:

Դատողությունը պետք է լինի տրամաբանական, միտքը հասկանալի արտահայտված:


Տեղափոխեք աշխատանքը պատասխանների թերթիկի վրա:

Պատասխանների թերթիկում թույլ տրված սխալի վրա ուղղակի գիծ քաշեք, չի թույլատրվում առնել փակագծերի մեջ կամ խազմզել:

(4) № 32 Առաջադրանք.

Առաջադրանքի հրահանգ – Արվեստի որոշ նմուշներ մտածված են, որպես գրական ստեղծագործության պատկերազարդում: Տրված նկարներից ընտրեք արվեստի նմուշներից մեկը և կապակցեք այն կոնկրետ գրական ստեղծագործության հետ: Վերլուծեք ստեղծագործությունն ու որոշեք՝

1.



2.



3.



4.



- ճ. Արտահայտչական և կոնտեքստուալ առանձնահատկությունները, որոնք բացահայտում են այս նկարների կապը ձեր կողմից նշված ստեղծագործության հետ:
- Շ. Ո՞ր գեղարվեստական հնարքների միջոցով է մարմնավորում հեղինակը ստեղծագործության կոնկրետ հատվածը:

(15) № 33 Առաջադրանք. *Արվեստի նմուշի նկարագիր-վերլուծություն.*

Առաջադրանքի հրահանգ – Ընթոնեք, վերլուծեք և գնահատեք ստորև ներկայացված արվեստի նմուշը.



**Կատարեք առաջադրանքն ըստ ցուցումների.**

(3) **33.1** Նկարագրեք և բնութագրեք կոմպոզիցիան, ո՞ր ժանրին է պատկանում տրված կոմպոզիցիան: Նյութի և տեխնիկայի հիման վրա որոշեք, թե կերպարվեստի ո՞ր ճյուղի նմուշն է ներկայացված:

(3) **33.2** Վերլուծեք և համառոտ ձևակերպեք, թե կերպարվեստի ի՞նչ արտահայտչամիջոցներ ու հնարքներ է կիրառում հեղինակը նկարի վրա գեղարվեստական կերպարի բնույթ ստեղծելու համար:



(3) **33.3** Գեղարվեստաոճական բնութագրիչների հիման վրա սահմանեք ստեղծագործության ստեղծման ժամանակը, որոշեք, թե ո՞ր երկրի արվեստի նմուշն է ներկայացված, նշեք հեղինակի անունը:

(3) **33.4** Գնահատեք աշխատանքը՝ արտահայտեք Ձեր վերաբերմունքը, քննարկեք և հիմնավորեք Ձեր կարծիքը:

(3) **33.5** Դատողություններ արեք ազդեցությունների շուրջ, քննարկեք ստեղծագործությունը պատմամշակութային և այլ համատեքստերում: